ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի «Եղվարդի N 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի պարուսույց (3 հաստիքային միավոր, 0,25, 0,25 և 0,5 դրույք), երաժշտության դաստիարակ (2 հաստիքային միավոր, 1 և 0,5 դրույք), ֆիզկուլտուրայի հրահանգիչ (1 հաստիքային միավոր՝ 1 դրույք), հոգեբան (1 հաստիքային միավոր՝ 1 դրույք) և լոգոպեդ (1 հաստիքային միավոր՝ 1 դրույք) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2022թ. N 471 Ա/2 հրամանով հաստատված թեստավորման և հարցազրույցի հարցաշարերի համաձայն:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին՝ Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում(Ձև 1),մեկ լուսանկար 3Х4 չափի,
- Կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող թաստաթուղթ,
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 4),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածներից ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերի 08-ին՝ ժամը 11:00-ին, համայնքի «Եղվարդի N 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցե՝ ք. Եղվարդ, Սաֆարյան փողոց, 151 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել **099-85-90-93** հեռախոսահամարով: